

ԵՐԵՄԱՍԵԱԿ ՄԱՐԻԱՆ ԳԱԼՈՒՏ ԿԻՒՂՊԵՆԿԵԱՆԻ

Երեսուն տարիներ անցեր են այն թուականէն ի վեր, երբ Ս. Աթոռոյա և աղքիս մեծահամբաւ բարերար՝ Վասմաշութ Գալուստ Կիւղպէնկեան կնքեց իր ժահ կանացուն Լիզպոնի մէջ, 86 տարեկան հասակին (20 օգուհի 1955 ին),

Մանր էր կորուստը մարդուն, որ իր կեանքի ընթացքին իր զբայ կեդրոնացուց աշխարհի հզօրներուն նայուած քնները և արժանացաւ ամենա տիտղոսին: Անհատական ճիգերով և շնորհիւ իր տքնաջան աշխատանքին, ան հասաւ այնպիսի բարձունքի մը, որ միայն պատիւ կը բերէր մեր աղդին, կիւղպէնկեան համբաւաւոր տոնմին շառաւելին էր ան, որ իր մարդասիրական զործունէութեամբ և իր իշխանական նույիրատուութիւններով կրցաւ խորտակել կարելի բոլոր մրցանիշները, առոնք անձ մը համբաւաւոր գիտեն ընել: Ան նշանաբան ըրած էր վայելքի մէջ չըփնառել կեանքի իր նպատակը, այլ ընդհակառակը, միայն յամառ աշխատանքի մէջ գիտցաւ որոնել զայն և շնորհիւ իր անխոնջ ճիգերուն յաջողեցաւ հասնիլ միշաղդային դիրքի և համբաւի:

Երուստղէմի Առաքելական Ս. Աթոռն ալ անմասն չմնաց հանգուցեալին բարերարութիւններէն: Արդարեւ, 1929 ին հիմք գրուեցաւ Գալուստ Կիւղպէնկեան Մատենադարանին, ձեռամբ Երջանկայիշտակ Տ. Եղիչէ Դուրիհան Պատրիարքի, իսկ պաշտօնական բացումը կատարուեցաւ 1932 ին, ձեռամբ իր արժանաւոր յաջորդին՝ Երանշնորհ Տ. Թորգոմ Գուշակեան Պատրիարքի: Այսօր, աւելի քան կէս դար անցեր է այդ թուականէն, և կիւղպէնկեան Մատենադարանը առաջնակարգ տեղ կը գրաւէ սփյուքի մէջ, ըլլալով ազգային մշակոյթի գանձերուն հաւատարիմ պահպանը: Ենորջ 100,000 հասորներ — մէկ-երրորդը Հայերէն, իսկ մնացեալները օտար լեզուներով, մեծ մասամբ Անգլերէն և Ֆրանսիերէն — պարունակող մշակոյթի և լոյսի այս ազգպարծան հասաւառութիւնը կը պարտինք հանգուցեալի հրաշալի մեծագործութեան: Իր յիշտատակը մէշտ անմոռանալի պիտի մնայ որպէս հարազատ զաւակը հայութեան և իր վաստակը ոսկի տառերով պիտի արձանագրուի մեր պատմութեան մէջ:

Ինչպէս ամէն տարի, այս տարի ևս, Հոկտեմբերին, Ս. Յակոբեանց Մայր Յահարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Թարգմանչաց տօնին առիթով և յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյա բարերարին, ինչպէս նաև իր տիկնոջ և ծնողաց հոգիներուն ի հանդիսութեան: (Այսողեղ միջանկեալ ըստնք թէ Ս. Աթոռոյա մէջ սովորութիւն է նաև բարերարին հօր՝ Սարգսի հոգւոյն համար հանգստեան պաշտօն կատարել Ս. Սարգս տօնին որը!)

Թող միշտ անսասան մնայ Գալուստ Կիւղպէնկեան Հիմարկութիւնը:

ԱԱՀԱԿ ԳԱԼԱՅՅԵԱՆ

Պարտուղար Կիւղպէնկեան Մատենադարանի